Սիպիլ

Հայ լեզվին

Դո՛ւն առաջին վանկ շրթունքիս, առաջին վանկ իմ հոգվույս,
Նախկի՛ն հնչյուն իմ մանկական լեզվիս հեզ,
Որով լացի ու երգեցի միշտ հուզումներս, իղձս ու հույս,
Իմ մայրենի քաղցրի՛կ բարբառ, ողջո՛ւյն քեզ:

Քու բառերեդ արևեն վառ ու բյուրեղեն ալ վրձիտ՝
Իմ հոգվույս մեջ բոց մը կաթեց մշտակեզ,
Հուր ծարավ մը անհունության, բարվույն, մեծին ճշմարիտ.
Ո՞վ մանկությանս ազնիվ լեզու, կ՚օրհնե՛մ քեզ:

Տարիներով թափառական օտար երկիր ու վայրեր,
Ջուրկ մնացի ընտանիքես, տընակես.
Այլ քու կարոտդ անդարման ցավն եղավ սրտիս կարևեր,
Ո՞վ իմ լեզուս, ամեն իղձ զո՞հ ըլլա քեզ:

Ջարմանահրաշ վրսեմ թարդման դուն սրբությանց անմատույց,
Դուն արձագանգ հայ անցյալին, կյանքին վես,
Տիտաններու, քերթողներու անմահ փառքին ապացույց,
Ո՞վ վեհ բարբառ իմ հայրերուս, պատի՛վ քեզ:

Ալեծաղիկ կատարներու անմահ զավակ դարավոր,
Ծոցեդ անշեջ ճառագայթներ կը կը ժայթքես.
Մշտափթիթ գարուն մ՚անանց կը պրսակե դեմքդ աղվոր,

Անզուգական, քնքուշ լեզուս, համբո՜ւյր քեզ:

Դուն Մեսրոպին ու Սահակին շունչին թրթռումը ոսկի,
Որ հայրենի հուշերն անդուլ կ՝եղերգես.

Իր պաշտելի ավանդությանց, նշխարներուն սուրբ ըսկիհ,
Ո՜վ աննման չքնաղ լեզու, բուրվա՛ռ դեզ:

Ծով ծիածան որ կը գըլլես լայն կոհակներդ այգաբեր.
Մերթ գոհարներ ծավալելով, մերթ բեհեզ,
Մերթ սաղմոսներ ծփծփալով, մերթ վեպեր,
Ո՜Վ հայ լեզուս իմ պաշտելի, ողջո՜ւյն քեզ:

Դուն թոթռացիր անտառներու սոսիներուն տակ ըստեպ,
Հայ ուշուղին քնարին պարծանքն եղար վես.
Հիմա կ՝երգես զավակներուդ նժդեհ կյանքը երաշխեպ,
Քերթողներու անմահ բարբառ, բյո՜ւր փառք քեզ:

Օրհնյա՜լ ըլլան մեր հայրերը, որոնք թեև ցիր ու ցան,
Մութ օրերուն՝ մոլորած չոր շյուղին պես.
Մոռցան իրենց տունն ու տեղը, զավակներնին ուրացան,
Իրենց անձն ալ, բայց չը մոռցան երբեք քեզ:

Օրհնյա՜լ ըլլան մեր մայրերը, որենք ըզքեզ սընուցին,
Իրենց շունչովն ու աղոթքով սրտակեզ.
Խարխուլ, փըլած կտուրին տակ, կարոտ պատուռ մը հացին,
Գուրգուրանքով պահպանեցին միշտ ըզքեզ:

Թո՜ղ որ ես ալ, մեր հայրերու հետին զավակը թշվառ,
Սուրբ տաճարիդ ոտքը բերեմ ողջակեզ
Միշտ տառապած, երբեք շիջած սիրտես կայծ մը խամդավառ,
Հոգով պաշտեմ ու քընարովս օրհնեմ քեզ:

1912